ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

Ծնվել է 1839թ., զինվորականի ընտանիքում: Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, սակայն առողջական վիճակի վատթարացման պատճառով թողել է ուսումը:

1859թ. ծառայության է անցել Թիֆլիսի նահանգական վարչությունում, 1864թ. տեղափոխվել է Երևան և ծառայել տեղի նահանգական վարչությունում:

1884թ. հունվարին ընտրվել է Երևանի քաղաքային դումայի անդամ, նշանակվել է քաղաքապետի պաշտոնակատար:

1890 թվականից քաղաքային վարչության անդամ էր:

1895թ. նոյեմբերին ընտրվել է Երևանի քաղաքագլուխ:

1896թ. հոկտեմբերին թողել է քաղաքագլխի պաշտոնը՝ առողջական վիճակի վատթարացման պատճառով: